

#### 4.2.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2005թ. հունվար-մարտին հանրապետության տարածքում տեղաբաշխված կոլեկտիվ և անհատական զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 24631 զբոսաշրջիկ (ՀՀ ռեզիդենտներ), որը 2004թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 23.4%-ով:

#### Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

(մարդ)

	2004 թ. հունվար-մարտ	2005 թ. հունվար-մարտ	Տեսակարար կշիռը (2005թ. հունվար-մարտ,%)
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ<sup>1</sup></b>	<b>19960</b>	<b>24631</b>	<b>100.0</b>
<i>որոնցից ըստ նպատակի՝</i>			
գործնական	7426	8128	33.0
հանգստի և ժամանցի	7351	14101	57.2
բուժման	360	695	2.8
այլ	4823	1707	6.9

<sup>1</sup> Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: